թյունն ապահովելու նպատակով՝ նա կաթողիկոս. աթոռն Աղթամարից տեղափոխել է Արգինա: 961-ին Անիում օծել է Հայոց *Աշոտ Գ Ողորմած* թագավորին: Ա. Ա Մ-ուց մեզ են հասել 4 «Թուղթ» (Արարատ, 1896/97), որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում Բագրատունիների, Արծրունիների, ինչպես նաև Աղվանքի ու Սյունիքի վերաբերյալ: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ Ա. Ա Մ. կազմել է «Հաւատո նամակ» խորագրով ժող.:

*Գրկ.* Օ ր մ ա ն յ ա ն Մ., Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

**ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱՊԱՏԻ ԴԸՊՐՈՑ**, բարձր տիպի կրթօջախ Երևանի համանուն վանք-անապատում (ներկայիս Ս. Զորավոր եկեղեցու բակում): Հիմնել է Մովսես Տաթևացի վարդապետը, 1620-ին: Դասավանդել են քերականություն, աստվածաբանություն, փիլ., գրչության արվեստ: Գործել է շուրջ երկու տասնամյակ: Դպրոցում ուսանած գրիչների ընդօրինակությունների մեծ մասը պահվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանում:

**ԱՆԱՆԻԱ ԹԱՐԳՄԱՆԻՉ**, Ա ն ա ն ի ա Մ յ ո ւ ն ե ց ի, հիշված է նաև Ա ն ա ն ի ա ս և Ա ն ա ն ե (ծ. և մ. թթ. անհտ.), V դ. հայ թարգմանիչ: Աշակերտել է Մեսրոպ Մաշտոցին, նրան օգնել աղվ. գիրն ստեղծելիս: Ձեռնադրվել է Սյունյաց եպիսկոպոս, հիմնել տեղի դպրոցը: Նրան են վերագրում «Ի խորհուրդ Յովնանու մարգարէի», «Յաղագս Յովհաննու Մկրտչի» ճառերը և մատենագիրներ Փիլոնի ու Իրենեոսի գործերի թարգմանությունները:

*Գրկ.* Մ ա ր գ ի ս յ ա ն Բ., Անանիա թարգմանիչն և իւր գրական գործոց նմոյշներ, Վնտ., 1899:

**ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ**, Ա ն ա ն ե Ն ա ր ե կ ա ց ի (ծ. թ. անհտ.—մոտ 978), հայ մատենագիր, փիլիսոփա, Նարեկավանքի վանահայր և դպրոցի հիմնադիր: *Գրիգոր Նարեկացու* ազգականը: Կասկածվել է Թոնդրակյան շարժմանը հարելու մեջ: Կաթողիկոս Անանիա Ա Մոկացու առաջարկությամբ գրել է «Գիր խոստովանութեան»-ը, որով և հերքել է աղանդավոր լինելու վերաբերյալ իր դեմ եղած մեղադրանքը: Նույն կաթողիկոսի հանձնարարությամբ գրել է «Հակաճառութիւն ընդդեմ թոնդրակեցւոց» գործը: Ա. Ն-ու աշակերտ *Ուխտանեսը* հիշատակում է նաև «Հաւատարմատ» (973) գործը, ուր Ա. Ն. ձաղկել է երկաբնակներին: Ա. Ն-ու գրվածքները կարևոր աղբյուր են թոնդրակեցիների գաղափարախոսությունն ուսումնասիրելու համար: Որպես մանկավարժ առաջնային է համարել ուսուցչի անձն. օրինակը, գիտելիքների հարստությունը, մեծ տեղ է տվել գրակ-յանն ու երգեցողությանը: Ա. Ն-ուն աշակերտել են Գրիգոր Նարեկացին, նրա եղբայր Հովհաննեսը:

**ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ**, Շ ի ր ա կ ո ւ ն ի, Շ ի ր ա կ ա վ ա ն ց ի (605—610-ի միջև —685—690-ի միջև), հայ փիլիսոփա, մաթեմատիկոս, տիեզերագետ, տոմարագետ, ճշգրիտ գիտությունների և բնագիտ. ուղղության հիմնադիրը Հայաստանում: Ծնվել է Շիրակի Անեանք կամ Շիրակավան գյուղում: Նախն. կրթությունն ստացել է տեղի Դպրեվանքի դըպրոցում: Գիտակցելով մաթ. և բնագիտ. գիտելիքների դերը փիլ-յան յուրացման գործում, համապատասխան կրթություն ստանալու նպատակով շրջագայել է Արլ-ի տարբեր երկրներում, հաստատվել Տրապիզոնում, աշակերտել բյուզ. գիտնական Տյուքիկոսին: Վերադառնալով հայրենիք՝ ծավալել է գիտ., լուսավոր., կրթ. գործունեություն, 630-ական թթ. վերջին հիմնել բարձրագույն տիպի բնագիտ-մաթ. դպրոց, որտեղ հատուկ ուշադրություն է նվիրել «քառյակ» գիտությունների (թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն, աստղաբաշխություն), ինչպես նաև աշխարհագրության, տոմարագիտության, փիլ-յան, հայոց լեզվի դասավանդմանը: Իր կազմած կրթ. ծրագրին համապատասխան կազմել է «*Քննիկոն*» երկը, որի առանձին մասերը՝ «Տիեզերագիտությունը», «Տոմարագիտությունը», «*Աշխարհացոյցը*», թվաբանության դասագիրքը ևն, հետագայում դիտվել են որպես ինքնուրույն աշխատություններ: Ա. Շ-ու ծրագիրը, ի տարբերություն Արմ-ում ընդունված ծրագրերի, «քառյակ» գիտությունների ուսումնասիրությունն ավարտելուց հետո անհրաժեշտ է համարել կրկին, որակապես նոր մակարդակում անդրադառնալ «եռյակ» գիտություններին [քերականություն, հռետոր. արվեստ, տրամաբանություն (դիալեկտիկա)]՝ ուսումնասիրելով նաև դրանց հարակից գործնական բնույթի առարկաները: Ա. Շ. ամփոփել, համակարգել և նորովի իմաստավորել է անտիկ և հայ փիլ-յան ու գիտության նվաճումները: Փիլ-յան հիմն. հարցը լուծել է իդեալիստորեն, ընդունել է աստծու առաջնայնությունը: Նա աստծու գոյության տիեզերաբան. ապացուցման կողմնակից է. անճանաչելի աստվածային էությունը ճանաչվում է արարված աշխարհի ճանաչման միջոցով: Ա. Շ-ու կարծիքով, աստված ստեղծել է ոչ թե աշխարհի ողջ բազմազանությունը, այլ 4 տարրերը (հուր, օդ, հող, ջուր), որոնցից յուրաքանչյուրը օժտված է զույգ որակներով, և որոնց փոխազդեցությունը ընկած է նյութ. աշխարհի առաջացման ու զարգացման հիմքում: Ա. Շ. տարրերը և որակները քննում է ֆիզ. և տիեզերաբան. առումով, դիտարկման տիեզերաբան. կտրվածքով հանգում տիեզերքի կառուցվածքի պրոբլեմին: Տիեզերքը, ըստ նրա, սահմանափակ է, ունի 2 սահման՝ փոքր (Երկիր) և մեծ (վերին երկինք): Վերին, անտեսանելի երկինքը գնդաձև է, գտնվում է հավերժ, շրջանաձև, անչափ մեծ արագության շարժման վիճակում: Ստորին, տեսանելի երկնքի, ինչպես նաև երկնակամարի ներքո գտնվող լուսատուների, Արեգակի, Երկրի, Լուսնի ևն երկնային մարմինների անընդհատ շարժումը և գնդաձևությունը պայմանավորված են վերին երկնքի

Անանիա Շիրակացու արձանը Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի առջև, բազալտ (1963, քանդ. Գ. Բաղալյան)

շարժմամբ և ձևով: Երկիրը գտնվում է տիեզերքի կենտրոնում, և նրա հաստատուն, հավասարակշռված վիճակը կշռի ու շարժման ուժի համակցության արդյունք է: Երկնակամարի ու Երկրի միջև գոյություն ունեն 7 շարժական գոտիներ, դրանց վրա են տեղավորված երկնային մարմինները, որոնք, զուրկ լինելով սեփական լույսից և ջերմությունից, այն ստանում են վերին երկընքից: Ա. Շ. պատճառական կապ է նկատել երկնային մարմինների շարժման, երկրամերձ տարածության մեջ և Երկրի վրա տեղի ունեցող պրոցեսների միջև: Նա հիմնավորել է հավերժ և անընդհատ առաջացումն ու զարգացումը որպես գոյության հիմն. օրենք և բնության հավերժության պատճառ: Ըստ Ա. Շ-ու, երկնային ու երկրային մարմինները կազմված են միևնույն 4 տարրերից, որը պայմանավորում է տիեզերքի նյութ. միասնությունը: Կարևոր նշանակություն է տվել փորձնական ճանաչողությանը, փորձը դիտել որպես ճանաչողության միջոց, գիտելիքի տեսակ և ճշմարտության չափանիշ: Իր տես. կառուցումների ճշմարտությունը հաստատել է դիտողական և փորձնական օրինակներով, բնական և պարզ մոդելներով (օր., տիեզերքը նկարագրել է ձվի մոդելով): Օգտագործել է դիտարկման, համանմանության, փորձի են գիտ. մեթոդներ: Դրել է գիտելիքների հաջորդափոխման հարցը, անտիկ գիտությունը համարել քրիստ. աշխարհայացքի հիմքը, պաշտպանել դրանց անհակասականության, հավատի և գիտության միասնության գաղափարը: Ա. Շ-ու թվաբանության դասագիրքը հնագույններից է համաշխարհային մաթ. գրակ. մեջ, այն պարունակում է թվաբան. աղյուսակներ, խընդիրներ, խրախճանականներ, որոնք մինչև այժմ չեն կորցրել իրենց ճանաչող., ուսումնամեթոդ. նշանակությունը: Տոմարագիտ. աշխատությունները բովանդակում են տոմարական բազմաթիվ հաշվումներ, աղյուսակներ, բոլորակներ, 532 տարիների զուգացանկ, հայ և 14 ժողովուրդների ամսանունները, ժամանունները ևն: Անաստաս կաթողիկոսի հանձնարարությամբ կազմել է հայկ. առաջին անշարժ տոմարը, որը մերժվել է կաթողիկոսի մահից հետո: Ա. Շ-ուն է վերագրվում նաև մի անանուն ժամանակագրություն, որը կազմված է հայ և օտար մի շարք աղբյուրների հիման վրա: Գիտ. հետաքրքրություն են ներկայացնում նրա չափագիտ., օդերևութաբան., թանկարժեք քարերին նվիրված երկերը: Քննադատել է աստղագուշակությունը, ճակատագրապաշտությունը և կախարդությունը: Նրա գիտ. ժառանգությունը զգալի ազդեցություն է ունեցել հայ բնագիտ. մտքի հետագա զարգացման, նաև մի շարք բյուզ. գիտնականների հայացքների վրա:

Ա. Շ. հորինել է նաև Հարության ԱՀ—ԴԿ 8 ծավալուն հարցնակարգերի մեծ մասը և հոգեգալստյան ու վարդավառի առաջին օրերի կանոնները: Որպես երաժշտության տեսաբան կազմել է ձայնագիտության բնագավառում իր ժամանակի չափանիշով առաջավոր ուսմունք ներկայացնող «Տասնակարգյան աղյուսակի» հայկ. տարբերակը, որով մեծապես հարստացրել է հայ և, միաժամանակ, արլ. երաժշտագիտությունը՝ ձայների, ձայնամիջոցների և ձայնաշարերի կազմությանը վերաբերող նոր գաղափարներով:

*Երկ.* Մատենագիտություն, թրգմ., առաջաբանը և ծնթգր. Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Ե., 1979: Космография, пер. с древнеарм., предисл. и коммент. К. С. Тер-Давтяна и С. С. Аревшатяна, Е., 1962.

*Գրկ.* Աբրահամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը. ուսումնասիրություն, Ե., 1944: Թումանյան Բ., Հայ աստղագիտության պատմություն, հ. 1, Ե., 1964: Խլոպյան Գ. Տ., Անանիա Շիրակացու աշխարհայացքը, Ե., 1964: Թահմիզյան Ն., Անանիա Շիրակացին և Հարության ութ հարցնակարգերը, «Էջմիածին», 1984, № 5: Petri W., Ananiya Schirakazi—ein armenischer Kosmograph des 7. Jahrhunderts, «Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft», B. 114, München, 1964.

**ԱՆԱՆԻԿՅԱՆ** Հակոբ Հարությունի (20.12.1919, Ալեքսանդրապոլ —5.3. 1977, Երևան), հայ սովետ. նկարիչ: ՀՍՍՀ վաստ. ուսուցիչ (1965): ՍՄԿԿ անդամ 1946-ից: Հայրենական մեծ պատերազմի մասնակից: Ավարտել է ԵԳՈՒ



Հ. Անանիկյան. «Կարմիր դարպասներ» (1972, Ժամանակակից արվեստի թանգարան, Երևան)

(1939): 1939—41 և 1944—66-ին դասավանդել է Լենինականի նկարչ. դպրոցում, 1966-ից՝ Երևանի № 8 ՄՊՏՈՒ-ում: Լավագույն գործերից են հին Գյումրիի կենցաղը ներկայացնող կտավները՝ «Դեպի օտարություն» (1971), «Մեր կոշկակարը» (1971), «Պոլոզ Մուկուչը» (1973, երեքն էլ՝ ԺԱԹ), «Յաղիկը» (1973, ՀՊՊ):

**ԱՆԱՆԻԿՅԱՆ** Մարտիրոս Հարությունի (25.12.1875, Սեբաստիա —4.8.1924, Դամասկոս), հայ բանասեր, հրապարակախոս: Զբաղվել է հայ., պարսկ., լատ., հուն., անգլ., գերմ., եբր., արաբ. լեզուների, արլ. հին ու նոր կրոնների ուսումնասիրությամբ: «Մեծն Ներսես Պարթև», «Հայ ազգին ծագումը», «Քննական պատմություն հայոց», «Նարեկա-